ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2024թ. **N -----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպություններն Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման հավելվածը 21-րդ և 182-րդ կետերից հետո լրացնել համապատասխանաբար 21.1-ին և 182.1-ին կետերով հետևյալ բովանդակությամբ.

«

21.1.	«Երևանի հ.164 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ
182.1.	«Երևանի հ.141 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան համայնքի ենթակայության բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարումը Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-ն որոշմամբ վերապահված է համապատասխան վարչական շրջանների ղեկավարներին՝ բացառությամբ «Երևանի հ.141 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, որը մինչև ընթացիկ տարվա սկիզբը մատուցել է գիշերօթիկ ծառայություն և «Երևանի հ.164 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, որը Երևանի ենթակայության է հանձնվել 2022 թվականին:

Հաշվի առնելով, որ ներկայում «Երևանի հ.141 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի հ.164 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը որևէ ձևով չի առանձնանում համայնքային ենթակայության մյուս նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունից՝ նպատակահարմար է «Երևանի հ.141 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանձնել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի ենթակայությանը, իսկ «Երևանի հ.164 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի ենթակայությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը:

2. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն որոշման ընդունմամբ Երևան քաղաքում համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակով գործող բոլոր մսուր-մանկապարտեզները հանձնված կլինեն վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության կողմից:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և համայնքային բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և համայնքային բյուջեի եկամուտներում ու ծախսերում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

5. Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի ընդունման կամ դրանց անհրաժեշտության բացակայության մասին.

Նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ